**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան 10 դեկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով քաղաքացի Ֆրիդիկ Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ֆրիդիկ Հարությունյանը 2010թ. նոյեմբերի 25-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կողմից՝ իր խնդրանքը հիմնավորող որեւէ փաստարկ չի բերվել, դիմումն ամբողջությամբ բաղկացած է գործի դատավարական նախապատմությունից:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 231-րդ հոդվածը չի կիրառվել դիմողի նկատմամբ, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի քննությունը մերժելու հիմք է:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածների վերաբերյալ առկա են սահմանադրական դատարանի՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 եւ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումները, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննությունը մերժելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Ֆրիդիկ Հարությունյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

10 դեկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-39